

ՄՈՒՇԵՂԻ ՎԵՊԸ ԱՐԱՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Հայ վիպական բանահյուսության շարքում կարևոր տեղ ունի Տարոնի պատերազմը, որի գլխավոր հերոսն է Մուշեղ Մամիկոնյանը: Մուշեղի վեպը, Մ. Արեղյանի արտահայտությամբ, ձևավորվել է ժողովրդական գրույցի ձևով և Սեբեոսի պատմության մեջ պատմվել է որպես հոսսորվի ու Մուշեղի պատում, որն առատորեն հագեցած է ժողովրդական վեպին հատուկ տարրերով: Ըստ Սեբեոսի պատմության, պարսից Որմիզդ (579—590) արքայի դեմ ապստամբեց նրա հռչակավոր զորավարը՝ Վահրամ Մեհրանդակը կամ Չուրինը: Սակայն Որմիզդի արքունիքում հեղաշրջում կատարվեց, նախարարները սպանեցին նրան ու կամեցան գահին նստեցնել նրա դեռատի որդուն՝ հոսսորովին: Վահրամը հարձակվում ու գրավում է Տիգրան, իսկ հոսսորվի երկու քեռիները՝ Վնդուն ու Վստամը, հազիվ փախցնում են նրան: Մանր դրուքյան մեջ ընկած հոսսորվը դիմում է Բյուզանդիայի Մորիկ (Մավրիկիոս) կայսրին, խնդրելով վերականգնել իր գահը՝ փոխարենը խոստանալով Հայաստանի մեծ մասը գիշել կայսրությանը: Մորիկի հրամանով հայոց պատրիկ Հովհանն հայ և հույն զորքի գլուխն անցած շարժվում է դեպի Արևելք՝ օգնելու հոսսորվին: Զորքի մեջ կարևոր դիրք ունենր Մուշեղ Մամիկոնյանը, որպես հայ նախարարական դասի ներկայացուցիչ: Վահրամը երկու նամակ է առաքում Մուշեղին, հայտնելով, որ եթե նա իրեն միանա հոսսորվի դեմ, ապա ինքը փոխարենը կվերականգնի Մեծ Հայքի թագավորությունը՝ Արշակունյաց թագավորության սահմաններով: Սակայն Մուշեղը մերժում է այս առաջարկը: Ատրպատականում տեղի ունեցած ճակատամարտում Վահրամ Չուրինը պարտվում ու փախչում է: հոսսորվն ուրախ, բայց և միաժամանակ դժգոհ էր, որ տիրապեց Վահրամը փախել-ազատվել էր: Նրա մերձավորները համոզեցին նրան, թե Մուշեղ Մամիկոնյանը, որն այդ ժամանակ Հայաստանի պարսկական մասում էր, Վահրամին տվել էր երիվար ու զենք և արձակել նրան: հոսսորվը նրանց հավատալով՝ փորձեց խաբուսությամբ ու նենգությամբ բռնել Մուշեղին, սակայն վերջինս կարողացավ հեռանալ Հայաստանի հունական մասը: Անուհետև Մուշեղը մնաց Մորիկ կայսրի արքունիքում: Կայսրը նրան զորքով ուղարկեց Բալկաններ՝ ավարների դեմ կռվելու և, թեև Մուշեղը հաղթեց ու անցավ Դանուբը, հետագայում պարտվեց ու սպանվեց²:

Եթե Սեբեոսի մոտ Մուշեղ Մամիկոնյանի կերպարը հիմնականում պատմականի ու մասամբ վիպականի խառնուրդ է, ապա «Տարոնի պատմության»³ մեջ վիպականը գերակշռում է, և որ ամենակարևորն է, Մուշեղը վերջնականապես դառնում է զուտ Տարոնի և հատկապես Սասունի հերոս: Այստեղ նա կոչվում է «Մուշեղ, զտէրն Մշոյ, և հուժայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ»⁴: «Տարոնի պատմության» մեջ Մուշեղ Մամիկոնյանը Տարոնի իշխանն է, որը հովանավորում է Գլակի կամ ս. Կարապետի վանքը: Ահա այդ ժամանակ սպանվեց պարսից Որմիզդ արքան և նրա որդի հոսսորվը փախավ Բյուզանդիա՝ Մորիկ կայսրի մոտ և նրա օժանդակությամբ վերականգնեց իր գահը: հոսսորվը, Տարոնի իշխան Մուշեղին տանելով Դվին, նրան հաստատեց հայոց մարզպան: Նա Մուշեղին տվեց 30 հազարանոց հայկական զորք, և ինքն

1 Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 439:

2 «Պատմություն Սեբեոսի», Երևան, 1979, էջ 72—84, 90—91:

3 Տե՛ս վրան Մամիկոնեան, Պատմություն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 145—203:

R. Grousset, Histoire de L'Arménie. Paris, 1947, p. 276—281. P. Goubert, Byzance avant L'Islam. t. I «Byzance et L'Orient», Paris, 1951, p. 191—197.

4 Տե՛ս վրան Մամիկոնեան, էջ 158 (տողատակ):

էլ վերցնելով 70 հազարանոց հունական զորքը՝ գնացին Բալխաստան (Բահլ Շահաստան)։ Հույները մեծամտորեն չկամեցան հայոց զորքի կողքին մնալ ու մէկ ժամով հեռու կանգնեցին։ Խոսքովի հակառակորդ պարսիկ նիխորճեսս Վորապարը 80 հազարանոց զորքով հարձակվեց Մուշեղի վրա, սակայն հայոց զորքը, Մշո ս. Կարապետին օգնության կանչելով, հաղթեց նիխորճեսին։ Խոսքովն ուրախ էր և կամեցավ պարգև շնորհել հայերին, բայց հույները, ամոթով մնալով, նախանձեցին Մուշեղին. Մորիկը խոսքովին լուր առաքեց, թե Մուշեղը կամենում է նրան սպանել։ Խոսքովը փորձեց խաբեություն բռնել Մուշեղին, սակայն վերջինս տեղեկանալով՝ վերադարձավ Հայաստան, թողեց մարզպանության պաշտոնը և քաշվեց Տարոն գավառը։ Երբ Մորիկը սպանվեց, խոսքովը գնաց Արևմուտք՝ նրա վրեժն առնելու։ Նա կանչեց Մուշեղին, որ իր հետ գա, սակայն պատասխան չստացավ։ Վերադարձին խոսքովը Միհրան զորավարին ուղարկեց Մուշեղի դեմ, բայց Տարոնի իշխանը նրա դեմ ուղարկեց Գալլ Վահանին, որը ջախջախեց Միհրանի զորքը։ Վահանը դարձավ Տարոնի իշխան, իսկ Մուշեղը մեռավ խոր ծերության մեջ⁵։

Մուշեղի վեպը անցել է նաև արաբական ու պարսկական մատենագրության մեջ։ Արաբ պատմիչ (Ժագուժով պարսիկ) Դինավարին⁶ (մեռ. 895-ին) Վահրամ Զուբինի ապստամբության մասին պատմելիս հիշում է հայազգի Մուշեղին (Մուշիլ ալ-արմանի), որը Սասանյան Իրանի նշանավոր մարզպաններից էր և խոսքովին կողմնակից։ Ըստ Դինավարիի, պարսից Որմիզդ արքայի դեմ հարձակվել էին Միջին Ասիայի թուրքաց Շահինշահը, արևմուտքից Ռումի (Բյուզանդիայի) թագավորը և Հայաստանի կողմից հազարաց թագավորը։ Որմիզդը նախ հաշտվեց Ռումի թագավորի հետ՝ քաղաքներ զիջելով, ապա Հայաստանի և Ատրպատականի կառավարիչները ետ մղեցին խաղաղներին։ Ինչ վերաբերում է Միջին Ասիայի թուրքաց թագավորին, ապա նրա դեմ ուղարկեց Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ Վահրամ Վշնասպի (Բահրամ Գուշնաս) որդի Վահրամ Զուբինին (Բահրամ Շուբին), որը հաղթեց թուրքերին։ Սակայն Որմիզդի մեծ վզրուկը (վեզիր) մեղադրեց Վահրամին, թե հաղթանակից ստացված ավարի մի փոքր մասն է միայն ուղարկել Որմիզդ արքային։ Վերջինս, հավատալով նրան, վերավորական նամակ ուղարկեց Վահրամին, որը զայրանալով՝ ապստամբեց։ Այդ ժամանակ թագավորության մեծամեծները Որմիզդին սպանեցին։ Վահրամն իր մոտ հրավիրեց թագավորության երևելիներին ու խնդրեց նրանց համաձայնությունը, որ ինքը տնօրինի թագավորության գործերը՝ մինչև Որմիզդի որդի խոսքովի չափահաս դառնալը։ Մի խումբ համաձայնվեց, սակայն ուրիշներն առարկեցին։ Վերջիններից էր հայազգի Մուշեղը (Մուսիլ ալ-արմանի), որը մեծ մարզպաններից էր։ Վահրամը պահանջեց, որ իրեն առարկողները երեք օրվա ընթացքում հեռանան Տիգրոսից։ Հեռացավ նաև հայազգի Մուշեղը իր համախոհներով, որոնք մոտավորապես քսան հազար էին, և կանգ առան Ատրպատականում, սպասելով խոսքովի վերադարձին, որին տարել էին Ռումի երկիրը (Բյուզանդիա)։ Տիգրոսից փախավ նաև խոսքովի քեռին՝ Վնդոն (Բինդույն) և հասնելով Ատրպատական՝ մնաց Մուշեղի ու նրա զորքի հետ։ Ռումի կայսրը, խոսքովին ամուսնացնելով իր Մարիամ դստեր հետ, օգնական զորքով, որի հրամանատարն էր իր որդի Թեոդոսը, ուղարկեց Հայաստան։ Խոսքովն իր զորքով մտավ Հայաստան, ապա երբ հասավ Ատրպատական, նրան միացան հայազգի Մուշեղն ու Վնդոն, ինչպես նաև իր մարզպաններն ու Ֆարսի մարզպանները։ Տեղի ունեցավ ճակատամարտ, և Վահրամ Զուբինը պարտվեց⁷։

⁵ Նույն տեղում, էջ 203։

⁶ F. W. Wüstenfeld, Die Geschichtschreiber der Araber und Ihre Werke, Göttingen, 1882, S. 27.

⁷ Abu Hanifa ad-Dinawari, Kitab al-Akhbar al-Itwal, Leyde, 1888, p. 81-97.

Մուշեղին հիշատակում է նաև արաբ պատմիչ (ծագումով պարսիկ) Թաբարին (մեռ. 923-ին)⁸։ Ըստ նրա հոսրով Պարվեզը (Աբարուիզ) Վահրամ Չուրինի ապստամբությունից և իր հոր սպանությունից հետո հեռացավ դեպի Ռումի երկրերը։ Նա հասավ Անտիոք, որտեղից նամակ գրեց Ռումի թագավոր Մորիկին (Մաուրիկ), խնդրելով օգնություն։ Մորիկը նրան ամուսնացրեց իր աղջկա՝ Մարիամի հետ և իր եղբայր Թեոդոսին 60 հազար ռազմիկներով հոսրով Պարվեզի հետ ուղարկեց Արևելք։ Խոսրով Պարվեզը հասավ Ատրպատական, ուր նրան դիմավորեց Վնդոն և մի մարդ այդ երկրի սպահապետներից (Խաբահրադ), որը կոչվում էր Մուշեղ (Մուսիլ), քառասուն հազար ռազմիկներով։ Խոսրով Պարվեզին օգնության եկան իշխաններ Ֆարսից, Սպահանից և Խորասանից։ Ապա տեղի ունեցավ ճակատամարտ, և Վահրամ Չուրինը պարտվեց⁹։

Բնական է, որ Դինավարին և Թաբարին Մուշեղի մասին իրենց տեղեկությունները քաղել են հվադայ նամակ կոչված պահլավերեն մատյանի արաբերեն թարգմանությունից, որը կոչվում էր հուդայնամե։ Սա պարսից արքաների վիպական տարեգրությունն է եղել, որն իբն Մուկաֆֆա կոչված պարսիկը (հավանաբար զրադաշտական, մեռ. 757-ին) թարգմանել էր պահլավերենից արաբերեն։ Դժբախտաբար չեն պահպանվել ո՛չ պահլավերեն բնագիրը, ո՛չ արաբերեն թարգմանությունը, սակայն մի խումբ արաբ պատմիչներ՝ իբն Կուտայբա, Դինավարի, Յակուբի (IX դ.), Թաբարի, Համզա Իսֆահանի և Մասուդի (X դ.) օգտվել են այդ մատյանից։ Խվադայ նամակը, ըստ իրանագետների մոտ ընդունված կարծիքի¹⁰, վերջնական խմբագրման է ենթարկվել Սասանյան վերջին արքա Հազկերտ III-ի օրոք (632—652) և, հավանաբար, այդ ժամանակ ձևավորված Մուշեղի վեպը բանավոր ճանապարհով անցել է պարսկական միջավայր ու ներթափանցել Խվադայ նամակի մեջ։

Կարելի է հարց տալ, թե արդյոք Խվադայ նամակում գտնվող այս զրույցի մեջ Մուշեղ Մամիկոնյանի մասին տեղեկություններն ինքնուրույն կերպով պարսկական միջավայրում չեն ծագել¹¹։ Համենայն դեպս ավելի հավանական է ենթադրել, որ դա հայկական միջավայրից է անցել պարսկական միջավայրը, այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամենասերտ հարաբերություններ կային հայերի և պարսիկների միջև։ Հայաստանի արևելյան մասը դեռ Սասանյան իրանի կազմում էր, և իրանաբնակ (պարսկաբնակ) Ատրպատականը անմիջականորեն հարևան էր հայկական Պարսկահաջք, Փայտականը և Սյունիք ու Արցախ նահանգներին։ Բանն այն է, որ պարսկական տարբերակը հայկական պատումի հետ կապում է Տարոնի պատմության մեջ առկա այն տեղեկությունը, թե Մուշեղ Մամիկոնյանը Հայաստանի պարսկական մասի նախարարներից էր, մի հիշատակություն, որը գտնում ենք նաև Դինավարիի ու Թաբարիի և ավելի ուշ՝ Ֆիրդուսու մոտ։ Մինչդեռ Սերեոսը Մուշեղին Հայաստանի բյուզանդական մասի նախարարներից է համարում և դա հենց պատմական իրողությունն է։

Դինավարիից ու Թաբարիից մեկ դար ուշ ապրած Ֆիրդուսին (մեռ. 1020-ին) իր «Շահնամեում» Մուշեղին հիշում է որպես Մուշիլ արմանի (հայազգի Մուշեղ)։ Այսպես, երբ Բենդույը Տիգրոնի բանտից փախչելով եկավ Ատրպատական, նա դիմեց «Դեպի այնտեղ ուր գտնվում էր Մուշեղ հայրը»¹¹։ Ապա շարունակում է.

«Երբ տեսավ Մուշեղին ողջունեց նրան.
Պատմեց այն բաները, որոնք իր գաղտնիքն էին.
Մուշեղն ասաց նրան. «Այստեղից մի գնար,

8 F. Wüsttenfeld, Նշվ. աշխ., էջ 31.

9 Tabari, Tarikh, t. II, Le Calre, 1961, p. 180.

10 И. М. Оранский, Введение в иранскую филологию, М., 1960, с. 170.

11 «Ֆիրդուսի», քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1942, էջ 35.

Քեզ նորանոր տեղեկություններ կհասնեն,
Թե հոսսովը Հունաց երկրում ի՞նչ պատրաստեց, ինչ արեց,
Նոր հաշտություն կանի թե պատերազմ»¹²։
հոսսովը Բյուզանդիայից վերադարձավ Ատրպատական և կանգ առավ
«Այնտեղ ուր Մուշեղ հայն էր,
Որ մեծամեծների մեջ վսեմ էր»¹³։
Լսելով իր բացակայության ժամանակ Մուշեղի կրած նեղությունների մասին,
աշխարհակալ արքան ասաց.

«Քո քաշած նեղությունը անհայտ չի մնալ,
կշանանք որ քո օրը լավ լինի
Եվ քո անունը մեծերից մեծ կլինի»¹⁴։

Մուշեղը շնորհակալություն հայտնեց արքային։
հոսսովի բանակի և Վահրամ Զուբինի ընդհարման ժամանակ.
«Այնուհետև թագավորը եկավ բանակի կենտրոնի կողմը
Եվ տեսնելով, որ իր քաշերը ընկճվում են
հոսսովը Շապուհի մոտ մի մարդ ուղարկեց,
Թե՛ «Մուշեղին օգնական եղիր,
Կովեցեք և մեշք մեշքի տվեք,
Թերևս փայլուն բախտ ձեռք բերեք»¹⁵։

Կասկած չկա, որ Ֆիրդուսին դիմել է ուղղակի հավաքյալ նամակի պահլա-
վերեն բնագրին, որը X—XI դդ., հավանաբար, դեռ պահպանված պետք է լի-
ներ Պարսկաստանում։

Այսպիսով, հավաքյալ նամակից ծագող արարական և պարսկական տար-
բերակները Սեբեոսի և Տարոնի պատմության պատումներից զանազանվում
են նրանով, որ Մուշեղը, այլոց սադրանքով, հակասություններ չի ունենում
հոսսով թագավորի հետ։ հոսսովը Մուշեղին չի կասկածում, և վերջինս չի
պայքարում նրա դեմ։ Եթե «Տարոնի պատերազմն» իր հերոս Մուշեղի հետ
արձագանք է գտել և՛ պարսկական, և՛ արաբական մատենագրության մեջ, ապա
նրան հաջորդող Սասնա ծռեր դյուցազնավեպը՝ մի այլ արար պատմիչի
մոտ¹⁶։ XII դ. արաբերեն պատմական մի երկում, որը վերագրվել է IX դ. ա-
րաբ հեղինակ Վակիդին և բանասիրության մեջ հայտնի է Կեղծ-Վակիդի
անվամբ, Մուշեղը հանդես է գալիս որպես Մուշ իրն Սանասար (Մուշեղ որդի
Սանասարի)¹⁷։ Դա շատ կարևոր տեղեկություն է՝ որոշելու հաջորդական կա-
պը «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» և «Սասնա ծռեր» դյու-
ցազնավեպերի միջև։ Տարոնի պատերազմի հերոս Մուշեղի նախատիպը, ըստ
Մ. Աբեղյանի, Պարսից պատերազմի հերոսներից Մուշեղ Մամիկոնյանն է,
որը պայքարեց վերականգնելու Արշակունյաց գահը, հանձին Պապ թագավո-
րի։ Նրանց նույնությունն ակնհայտ է։ Նրանց միակ տարբերությունն այն է, որ
Բյուզանդիայից հունաց զորքերով իր սպանված հոր գահը ժառանգելու եկող
թագավորը ոչ թե հայոց Պապն է, այլ Սասանյան հոսսովը։ Երկուսի մեջ ևս
Մուշեղը թշնամի բանակի հետ հաղորդակցություն ունի և մեղադրվում է՝ թե
կարող է թշնամի թագավորին սպանել, բայց չի սպանում¹⁸։

12 Նույն տեղում, էջ 37։

13 Նույն տեղում, էջ 39։

14 Նույն տեղում, էջ 43—45։

15 Նույն տեղում, էջ 49։

16 Պատահական չէ, որ արաբ մատենագրությունն արձագանքել է հայկական երկու վեպե-
րին, քանզի բազմազգ աշխարհակալ խալիֆայության արաբալեզու մշակույթը ձգտել է իր մեջ
ներծծել հպատակ ազգերի մշակույթը։

17 Սասնա ծռերի այդ արաբական պատմի մասին մանրամասն տե՛ս Ա. Տեր-Ղեկոսյան,
Աղջիկ Տարոնի վեպը 12-րդ դարի արաբական աղբյուրում («Պատմա-բանասիրական
հանդես», 1978, № 3, էջ 265—286)։

18 Մ. Արեղյան, Երկեր, հ. 9, էջ 440։

Հստ արաբական պատումի, Տարոնի և Սասունի տեր Մուշեղը դարձել է սասունցիների նախնի Սանասարի որդի՝ Մուշ անվամբ։ Նա Սասունի տերն է, իսկ Տարոնը (Թարոն) տեղանունից վեր է ածվել անձնանվան և դարձել նրա նշանածը կամ կինը։ Ուրիշ խոսքով, վեպի գլխավոր կենտրոնը Տարոնից փոխադրված է Սասուն և Մուշեղի հին վեպը միացած է Սասունի ավանդույթները։ Մյուս էական փոփոխությունն այն է, որ Սասունի Մուշեղը կոչվում է ոչ թե պարսիկների, այլ արաբացիների դեմ, և վեպն ունի «արաբական շրջանի բնավորություն»¹⁹։

Հստ երևույթին VII—VIII դդ. Մուշեղ որդի Սանասարի անվանաձևը գործածական է եղել։ Նրա գործածման վերջին սահմանը Մ. Աբեղյանը դնում է X դարը (IX դ. երկրորդ կեսից հետո), երբ Սասունի վիպական հերոսը կոչվեց Դավիթ որդի (կամ Թոռ) Սանասարի²⁰։

Բայց ինչպես է պատահել, որ արաբական մատենագրության մեջ պահպանվել է Մուշ (Մուշեղ) որդի Սանասարի ձևը, իսկ հայ մատենագրության մեջ այն դեռ հայտնի չէ։ Բանն այն է, որ Տարոնի պատմության ձեռագրերում կան արժեքավոր որոշ տվյալներ, որոնք կարող են վկայել, որ դեռևս VII դ. Մուշեղի անունը կապված է եղել Սանասարի հետ։ Այսպես, հայ քաջարի գորավար Դավ Վահանը պարսիկ Միհրան գորավարի հետ պայքարի ժամանակ 500 (Շ) հոգի զորքով եկավ Մուշեղի մոտ. «3 (300) այր թողեալ յանցս Մեղտեայ և երկու հարիւր այր աշտենաւորս ի Սասանայ ի ծմակն թողեալ»²¹։ Այս նախադասության վերջին անորոշ մասի («ի Սասանայ ի ծմակն թողեալ») դիմաց Մատենադարանի XIV դ. ձեռագիրն ունի հետևյալ տողերը՝ «Ու արս երկերիւր աշտենաւորս ի Սարասանայ ցեղէն թողոյր ի ծծմակն»²²։ Մովսես խորենացու մոտ Սանասարը հիշված է թե հայկական ձևով, թե սեմական Սարասար տեսքով²³, որը, հավանաբար, «ի Սարասանա ցեղէն» արտահայտությամբ (կարելի է ուղղել «ի Սարասարա» կամ «ի Սանասարա ցեղէն» ձևերով) հանդես է գալիս Տարոնի պատմության մեջ։

Մեղտին Մուշեղի նստավայր Ողականից և Աշտիշատից փոքր հեռավորության վրա գտնվող մի վայր է (Մեղրագետից հյուսիս), ուր Դավ Վահանը թողեց 300 այր, իսկ ծմակում (ծծմակ)՝ 200 այր Սանասարի ցեղի մարդկանցից, որոնցից էր և ինքը՝ Մուշեղը։ Ուստի այստեղ ցույց է տրված կապը Մուշեղի և Սանասարի ցեղին պատկանող մարդկանց միջև։ Հետագայում Մուշեղը կոչվում է պարզապես որդի Սանասարի։

Մուշեղ Մամիկոնյանը, որպես պատմական կարևոր անձնավորություն, հիշված է ոչ միայն հայոց պատմության մեջ, այլև Բյուզանդիային և Սասանյան Իրանին նվիրված մենագրություններում։ Շ. Լը Բոն²⁴, Յու. Կուլակով-

¹⁹ Մ. Արեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 140—141։

²⁰ Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 394։ Արժեք ընդգծել, որ Հայաստանում 774—775 թթ. խալիֆայության լծի դեմ ծագած հուժկու ապստամբության ղեկավարն էր մի ուրիշ հուլակավոր Մուշեղ Մամիկոնյան, որի մասին հիշում է արաբ պատմիչ (ծագումով պարսիկ) Բալազորին՝ նրան կոչելով Մուշաիլ ալ-արմանի (հայազգի Մուշեղ), որի անձնավորությունը նույնպես կարող էր արտացոլել Սանա ծոերի սկզբնական շրջանի Մուշեղ որդի Սանասարի անվան մեջ (Liber expugnacionis regionum auctore al-Beladkori, Lugd. Bat., 1866, p. 210)։

²¹ Յովհան Մամիկոնեան, էջ 184։

²² Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 1886, ք. 39բ։

²³ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913, էջ 116։

²⁴ Ch. Le Beau, Histoire du Bas-Empire, nouv. ed. par M. de Saint-Martin t. I 0, Paris, 1829, p. 310.

սկին²⁵, Ն. Պիգուլևսկայան²⁶ Բյուզանդիայի, իսկ Ա. Քրիստենսենը²⁷ Սասանյան Իրանի պատմությանը նվիրված աշխատություններում ընդգծում են Մուշեղ Մամիկոնյանի կարևոր դերը վերոհիշյալ պատերազմում: Մուշեղի գործունեությունը մանրամասն ուսումնասիրել է բյուզանդագետ Պ. Գուբերը: Նա անդրադառնում է Մ. Չամչյանի²⁸ այն տեսակետին, թե հոսրոմի հետ հարձակվող բյուզանդական և հայկական զորքերի ընդհանուր հրամանատար Հովհան Միստակոնը և հայկական զորքերի հրամանատար Մուշեղը նույն անձնավորությունն են և գտնում է, որ դա անհավանական է²⁹:

Եթե Մուշեղ Մամիկոնյանի պատմական ու վիպական կերպարն արտահայտվել է Սեբեոսի, Տարոնի պատմության, Դինավարիի, Թաբարիի մոտ, ապա նրա կերպարը որպես հայադավանության (միաբնակության) ախոյան դրսևորվել է քաղկեդոնական (հայկական, հունական, վրացական) մատենագրության մեջ: Հնագույն վկայությունն այդ մասին գտնում ենք հայ քաղկեդոնական անհայտ հեղինակի կողմից մոտավորապես 700 թ. գրված պատմության մեջ. «Ձորավար Մուշեղ Մամիկոնյանը, Տարոնացի վերանվանյալը, գնալով Պարսկաստան և հաղթանակ տանելով հաստատեց հոսրոմին գահի վրա: Նա (հոսրոմը) թագավորեց Լէ (37) տարի. սա ամբողջ Հայաստանը մինչև Դվին տվեց Մավրիկիոս կայսեր, որի համար նրա կողմից արքա դարձավ: Նա (Մուշեղը) ինչպես նաև նրա զորքը, նրա կողմից բազմաթիվ մեծարժեք նվերներ ստացավ: Նույն տարին պարսից արքա հոսրոմը Մուշեղին ուղարկեց Մավրիկիոսի մոտ: Նա ժամանելով Կոստանդնուպոլիս պատմական խաչի մեծ տոնի օրը, իր ուղեկիցների հետ հրաժարվեց հաղորդությունից: Կայսրը հարցրեց և իմացավ պատճառը: Մուշեղն ասում էր, որ (չի հաղորդվում) Քաղկեդոնի ժողովի պատճառով և որովհետև դուք ի վերա մեր Տեր Հիսուս Բրիստոսի խոստովանում եք երկու բնություն: Կայսրն ասաց. «Ձեր նախորդ Վարդանը³⁰, նրա աղատները և նրանց վարդապետները գրավոր համաձայնություն տվեցին խոստովանել երկու բնություն»: Մուշեղը պատճառաբանում է. «Նրանք այդ արեցին կամ անգիտության և կամ էլ վախի պատճառով: Սակայն եթե դու ցանկանաս հանգիստ լսել և սխալը արդարորեն ուղղել, ապա դու ճշմարտությունը կգտնես իմ վարդապետների մոտ»³¹: IX դ. այս դեպքերի մասին խոսում են նաև Փոտ պատրիարքը³² և վրաց մատենագիր Արսեն

²⁵ Ю. Кулаковский, История Византии, т. II, Киев, 1912, с. 441, 446, 447.

²⁶ Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков, М.—Л., 1946, с. 104, 107.

²⁷ A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagen, 1936, p. 445. և նաև R. Grousset, Histoire de L'Arménie, Paris, 1947, p. 259.

²⁸ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 295: Մ. Չամչյանի տեսակետը վիճարկել է նաև Կ. Տեր-Սահակյանը («Հայ կայսեր Բիզանդիոնի», Վենետիկ, 1905, էջ 275—277):

²⁹ P. Goubert, Նշվ. աշխ., էջ 191—197, 216—221:

³⁰ Նկատի ունի 572-ի Սասանյան Իրանի դեմ հայկական ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանին:

³¹ Հ. Բաբբի կապ. Narratio de rebus Armeniae, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր («Բանբեր Մատենադարանի», հ. 6, 1963, էջ 456—467), հմտ. Ն. Ակիսյան, Կիրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 119—121:

³² «Фотия О гробе господ... и другие малые его творения», изданные А. И. Пашадопуло-Кераме в сом («Православный Палестинский сборник», вып. 31, Петербург, 1892, с. 182).

Սահարացիներ³³, Հետագայում դրան անդրադառնում են Վարդան պատմիչը³⁴ (XIII դ.) և Սիմեոն Ապարանցի³⁵ (XVI դ.):

Հայ իրականության մեջ Մուշեղ Մամիկոնյանը հռչակվել է որպես մի հերոս, որ շախշախել է Վահրամ Չորրինի նման զորավարին, խիզախորեն պայքարել խոսրով Պարվեզի (Ապրուեզ) նենգ դավերի դեմ, իսկ Կոստանդնուպոլսում իրեն դրսևորել է իբրև հայ ժողովրդի կրոնական համոզմունքների աննկուն պաշտպան, շխտարհվելով հայ ժողովրդին այնքան դառնություն պատճառած հռոմեացի անգի:

ЭПИЧЕСКОЕ СКАЗАНИЕ О МУШЕГЕ В АРАБСКОЙ ИСТОРИОГРАФИИ

АРАМ ТЕР-ГЕВОНДЯН

Р е з ю м е

В цикле армянских эпических сказаний Таронская война занимает особое место. Ее центральной фигурой является Мушег (Мушел) Мамиконяни. Образ Мушега встречается у арабских историков Динавари (IX в.) и Табари (X в.) как Мусил ал-армани (Мушег армянин). Здесь он фигурирует как один из феодалов Персидской Армении, который был сторонником Хосрова в борьбе с Вахрамом. Оба историка почерпнули сведения о Мушеге из перевода на арабский персидской «Кяити царей»—Худайнаме или Хвадай намак (на пехлевийском языке). Тем же пехлевийским источником пользовался Фирдуси (ум. 1020 г.), который также рассказывает о Мушеге.

Образ Мушега мы находим еще в арабском историческом сочинении Псевдо-Вакиди, где он назван «Муш ибн Санасар» (Мушег сын Санасара). Дело в том, что первоначально главный герой эпоса «Давид Сасунский» назывался Мушегом сыном Санасара, а приблизительно с X в. он стал называться Давидом сыном (или внуком) Санасара.

Эпический образ Мушега Мамиконяна встречается еще в халкидонитской (армянской, греческой, грузинской) церковной литературе, где он выступает в роли защитника монофиситства—официального учения армянской церкви.

³³ Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 42—43:

³⁴ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1882, էջ 84:

³⁵ «Սիմեոն Ապարանցի Վիպականութիւն սակս Պահլավունեացն զարմի և Մամիկոնեացն սեռի», Վաղարշապատ, 1870, էջ 83: